ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/01-ԴՄ-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի օգոստոսի 1-ի №1985-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի նիստի

ք. Երևան, «01» սեպտեմբերի 2025թ.

2025 թվականի սեպտեմբերի 1-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշման N 5 հավելվածով հաստատված N 7 աղյուսակով նախատեսված 2025 թվականի 1104 Գիտելիքահենք, նորարարական տնտեսությանը և փոքր ու միջին ձեռնարկատիրությանը աջակցություն ծրագրի 11001 «ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում» ծրագրի միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի օգոստոսի 1-ի №1985-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հերթական նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Դավիթ Բարսեղյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության վարչության պետ (Հանձնաժողովի նախագահ)
Ցոլակ Զոհրաբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող
Մարգարիտա Խաչատրյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության վարչության քաղաքականության և ծրագրերի բաժնի ավագ մասնագետ
Վահե Մխիթարյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության վարչության պետություն-մասնավոր երկխոսության բաժնի ավագ մասնագետ
Փառքուհի Ղազարյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության վարչության պետություն-մասնավոր երկխոսության բաժնի գլխավոր մասնագետ (Հանձնաժողովի քարտուղար)

Նիստին չէին մասնակցում՝

Նարինե Հարոյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության թեթև արդյունաբերության վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական

Քվորումն ապահովված է:

Լսեցին.

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին՝ հանձնաժողովի քարտուղարի ներկայացմամբ ստացված հայտերի և մասնակցած կազմակերպությունների վերաբերյալ, ներկայացված փաստաթղթերի պահանջներին համապատասխանության, ինչպես նաև հանձնաժողովի անդամների կողմից կատարված գնահատման արդյունքների մասին:

Քարտուղարը տեղեկացրեց, որ հանձնաժողովի գնահատող անդամները սահմանված ժամկետում կատարել են գնահատումները (համակարգի միջոցով):

Քննարկեցին

Քարտուղարը ներկայացրեց ամփոփված տվյալները.

1. «Աութսորս» ՍՊԸ առաջարկը ճանաչվել է համապատասխան մրցույթի պահանջներին, առաջարկի գին՝ 22,992,000 ՀՀ դրամ:
2. «Գևորգիան Կոնցեռն» ՍՊԸ առաջարկը մերժվել է՝ ծրագրի հրավերի մի շարք պահանջներին չբավարարելու հիմքով, առաջարկի գին՝ 22,908,000 ՀՀ դրամ, մասնավորապես արձանագրվել է.
   - ռիսկերի գնահատումը ներկայացված է մակերեսային, առանց մանրակրկիտ վերլուծության:
   - ներկայացված առաջարկի բովանդակությունը մասնակիորեն է բավարարում ծրագրի առաջնահերթ նպատակներին և թեմատիկ ուղղություններին:
   - ֆինանսական հաշվարկները լիովին հիմնավորված և համաչափ չեն ծրագրի նպատակներին:
   - հայտատուի փորձը, ինչպես նախորդ, այնպես էլ տվյալ ծրագրում ներգրավված մասնագիտական ներուժը որոշ ցուցանիշներով զիջում է մյուս մասնակցի համանման տվյալներին:
   - բացակայում է ծրագրի ավարտին ակնկալվող արդյունքների նկարագիրը:
3. Հանձնաժողովի անդամները քննարկեցին արդյունքները: Քվեարկության արդյունքում (5 կողմ, դեմ և ձեռնպահ չկան) որոշվեց մրցույթի հաղթող ճանաչել «Աութսորս» ՍՊԸ-ին:

Որոշեցին՝

1. Մրցույթի հաղթող ճանաչել «Աութսորս» ՍՊԸ-ին և ընկերության հետ կնքել պայմանագիր 22,992,000 ՀՀ դրամ առաջարկով:

2. Հանձնաժողովի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել մրցույթի արդյունքների հրապարակումը ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում:

3. Հանձնաժողովի քարտուղարին՝ մասնակիցներին ծանուցել մրցույթի արդյունքների վերաբերյալ:

Դ. Բարսեղյան (Հաձնաժողովի նախագահ) _____

Ց. Զոհրաբյան _____

Ն. Հարոյան _____

Մ. Խաչատրյան _____

Վ. Մխիթարյան _____

Փ. Ղազարյան (Հանձնաժողովի քարտուղար) _____